

**DOUBLETREE BY HILTON HOTEL YEREVAN CITY CENTRE
GROUP SALES AGREEMENT**

ԴԱԲԼՈՐԻ ԲԱՅ ՀԻԼՏՈՆ ՀՈԹԵԼ ԵՐԵՎԱՆ ՍԻԹԻ ՍԵՆՏԵՐ
ԽՄԲԱՑԻՆ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

<p>This Agreement is made and entered into as of 09.12.2022, by and between Velofirma LLC d.b.a. DoubleTree by Hilton Hotel Yerevan City Centre, with its registered office at: 14 Abovyan Street, Yerevan, Armenia. (hereinafter referred to as "Hotel"), and < Public Television Company of Armenia> Public Television Company of Armenia CJSC, with its registered office at: 0011, G. Hovsepyan 26, Yerevan, Armenia. (hereinafter referred to as "Company"). Company agrees that the terms of this Agreement are based upon the information provided by Company below.</p>	<p>Վերաֆիրմա ՄՊԸ, որը գործունեություն է իրականացնում Ղաբլթրի բայ Հիլթոն Հոթել Երևան Սիթի Սենթր անվան ներքո, որի իրավաբանական հասցեն գտնվում է ՀՀ, ք. Երևան, Արուսյան 14 հասցեում, (այսուհետ՝ Հյուրանոց), մի կողմից, և <Հայաստանի հանրային հեռուստարևիկերություն>, ՓԲԸ-ն, որի իրավաբանական հասցեն գտնվում է ՀՀ, ք. Երևան, 0011, Գ. Հովսեփյան 26 հասցեում, (այսուհետ՝ Ընկերություն) 09.12.2022 թ.-ին կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի շուրջ: Ընկերությունը համաձայնում է, որ սույն Պայմանագրի դրույթները հիմնված են իր կողմից տրամադրված տեղեկությունների վրա: Կողմերն արձանագրում են, որ Պայմանագրի պայմանները տարածվում են Կողմերի միջև մինչև դրա ստորագրումը 2022 թվականի դեկտեմբերի 02-ից առաջացած հարաբերությունների վրա:</p>
<p align="center">SECTION ONE DESCRIPTION OF THE EVENT</p>	<p align="center">ՀՈԴՎԱԾ ԱՌԱՋԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ</p>

- ❖ **Company Name:** Public Television Company of Armenia CJSC
- ❖ **Event Name and general description of event:** Junior Eurovision 2022
- ❖ **Contact Name:** Marianna Aslanyan
- ❖ **Contact Phone:** 010 650015 /288/
- ❖ **Contact Address:** e mail: marianna.aslanyan@1tv.am

<p align="center">SECTION TWO COMPANY ROOM RESERVATIONS</p>	<p align="center">ՀՈԴՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԱՍՐԱԳՐՈՒՄԸ</p>
<p>2.1. GUEST ROOM ACCOMMODATIONS: Hotel will hold the block of rooms specified in Exhibit I to this Agreement for Company's use. Except as indicated in this Agreement, Hotel does not guarantee that the rooms will be in proximity to each other.</p>	<p>ՀՅՈՒՐԱՍՆՆՆԱԿՆԵՐԸ. Հյուրանոցը սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված սենյակները կառանձնացնի Ընկերության համար և հավելվածում նշված ժամանակ կհատկացնի վերջինիս: Եթե այլ բան նախատեսված չէ, սույն Պայմանագրով, ապա Հյուրանոցը չի երաշխավորում, որ սենյակները կգտնվեն միմյանց մոտ:</p>

CHECK IN TIME: 15:00 CHECK OUT DATE/TIME: 12:00

<p>2.2. GUEST ROOM RATES</p>	<p align="center">ԱԱԿԱԳՆԵՐ</p>
<p>Hotel is pleased to confirm the following room rates for Company:</p>	<p>Հյուրանոցը Ընկերության համար առաջարկում է հետևյալ սակագները.</p>
<p>Standard: AMD 38400 Double/Twin: AMD 49800</p>	<p>Մեկտեղանի: 38400 ՀՀ դրամ Երկտեղանի: 49800 ՀՀ դրամ</p>
<p>Hotel room rates are inclusive of VAT. If Company is VAT-exempt, it must present all documentation required by Hotel.</p>	<p>Հյուրանոցի կողմից առաջարկվող սակագների մեջ ներառված է ԱԱՀ-ն: Եթե Ընկերությունն ազատված է ԱԱՀ-ից, ապա Ընկերությունը պետք է Հյուրանոցի պահանջով ներկայացնի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:</p>
<p>Taxes are subject to change. Hotel reserves the right to change room rates to reflect any change to the tax legislation.</p>	<p>Հարկերը ենթակա են փոփոխման: Հյուրանոցն իրավունք է վերապահում փոխել սակագները հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխություններն արտացոլելու նպատակով:</p>

<p align="center">SECTION THREE</p> <p align="center">BILLING</p>	<p align="center">ՀՈՂՎԱՏ ԵՐՐՈՐԴ</p> <p align="center">ՀԱՇԻՎՆԵՐ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ</p>
<p>3.1 DIRECT BILLING: Unless otherwise agreed in writing by and between the parties, all charges will be direct billed to Company and paid as provided herein.</p>	<p>ՀԱՇԻՎՆԵՐԻ ԴՈՒՐՍ ԳՐՈՒՄԸ. Եթե կողմերի միջև գրավոր այլ համաձայնություն չի կայացվել, սպա բոլոր վճարումների համար հաշիվները կներկայացվեն Հնկերությանը և կվճարվեն վերջինիս կողմից սույն Պայմանագրով նախատեսված կարգով:</p>
<p>3.2 PAYMENT: Hotel requires a prepayment of 50% of the estimated charges set out in Exhibit 1, which Hotel must receive by 06.12.2022 in order to guarantee a hold on Company's room block. If prepayment is not received by the above date, Hotel will no longer be required to continue to hold the room block for Company. Final payment will be made within 5 days after departure of Company's guests. Payments shall be made by wire transfer to the bank account of Hotel. All costs and expenses of wire transfer shall be borne by Company. Payments shall be deemed to be made on the date on which Hotel's bank account is credited with the amount due. The currency of payment is Armenian Dram (AMD). Payments shall be made, without making any deduction or withholding whatsoever, by Company. If any withholding is required by law, Company will be responsible for paying such additional sums as will be necessary so that Hotel receives the full payment.</p>	<p>ՎՃԱՐՈՒՄԸ. Հյուրանոցը պահանջում է կանխավճար Հավելված 1-ում նշված վճարման ենթակա նախահաշվային գումարի 50 տոկոսի չափով: Գանխավճարի գումարը Հյուրանոցը պետք է ստանա ամենուշը մինչև 06.12.2022, որպեսզի հյուրանոցի հաշիվները երաշխավորված պահվեն Հնկերության համար: Եթե կանխավճարը նշված օրը ստացված չլինի, սպա Հյուրանոցը պարտավոր չի լինի Հնկերության համար պահել սենյակները: Վերջնական վճարումը կատարվում է Հնկերության հյուրերի մեկնելուց հետո 5 օրվա ընթացքում: Վճարումները պետք է կատարվեն բանկային փոխանցմամբ՝ գումարը փոխանցելով Հյուրանոցի բանկային հաշվահամարին: Բանկային փոխանցման բոլոր ծախսերը հոգում է Հնկերությունը: Վճարումները համարվում են կատարված այն օրը, երբ դրամական միջոցները մուտքագրվել են Հյուրանոցի բանկային հաշվահամարին: Հաշվարկները և վճարումները կատարվում են ՀՀ դրամով: Վճարումները կատարվում են առանց պահումների: Եթե պահումները պահանջվում են օրերի համաձայն, սպա Հնկերությունը լրացուցիչ կվճարի այնքան, որքան անհրաժեշտ կլինի, որպեսզի Հյուրանոցը ստանա սույն Պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը:</p>
<p>3.3 INCIDENTALS: Incidental expenses of Company's guests will be the responsibility of each guest. The guest will be expected to leave a valid credit card with Hotel at the time of check-in. It will be Company's responsibility to inform its guests of this requirement.</p>	<p>ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ. Այլ ծախսերը վճարվում են Հնկերության այն հյուրի կողմից, որը կատարել այդ ծախսերը: Հաշվառվելու ժամանակ հյուրը պետք է Հյուրանոցի մուտքողնի վավեր վարկային քարտ: Հնկերությունը պետք է այս պահանջի մասին տեղյակ պահի իր հյուրերին:</p>
<p align="center">SECTION FOUR</p>	<p align="center">ՀՈՂՎԱՏ ԶՈՐՐՈՐԴ</p>
<p align="center">CANCELLATION AND OTHER FEES</p>	<p align="center">ԶԵՂԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ</p>
<p>4.1 CANCELLATION: Company and Hotel have entered into a binding commitment. Hotel is committed to providing the rooms and services specified in this Agreement and Hotel has offered certain rates and other concessions based upon anticipated revenues. The anticipated revenue includes, without limitation, the revenue from the total number of sleeping rooms requested by Company.</p>	<p>ԶԵՂԱՐԿՈՒՄԸ. Հյուրանոցը և Հնկերությունը կնքել են պարտադիր կատարման ենթակա պայմանագիր: Հյուրանոցը պարտավոր է տրամադրել սույն Պայմանագրում նշված սենյակները և ծառայությունները և, ելնելով կանխատեսվող եկամտի մակարդակից, առաջարկել է որոշակի սակագներ և այլ պայմաններ: Գանխատեսվող եկամտի մեջ ներառվում են Հնկերության կողմից պահանջվող սենյակների ընհանուր քանակից ակնկալվող եկամուտները: Գանխատեսվող եկամուտը, սակայն, չի սահմանափակվում միայն վերոգրյալով:</p>
<p>4.1.1 CANCELLATION BY HOTEL.</p>	<p>ԶԵՂԱՐԿՈՒՄԸ ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ԿՈՂՄԵՑ</p>
<p>If Hotel cancels this Agreement or is unable to provide the requested rooms, Hotel will work with Company to arrange alternative, comparable accommodations at Hotel at the rates set forth herein. If that proves impossible, Hotel will arrange for comparable space in a hotel in the vicinity of Hotel and shall provide, without charge, necessary transportation between the alternative site and Hotel. Hotel's liability is limited to these remedies and Hotel shall not be liable for any other damages.</p>	<p>Եթե Հյուրանոցը լուծի սույն Պայմանագիրը կամ չկարողանա տրամադրել պահանջվող սենյակները, սպա Հյուրանոցը կվորձի Հնկերությանն առաջարկել այլընտրանքային, համեմատելի սենյակներ Հյուրանոցում սույն Պայմանագրով սահմանված գներով: Անհնարինության դեպքում Հյուրանոցը պայմանավորվածություններ ձևեր կրելի Հյուրանոցի մոտակայքում գտնվող մեկ այլ հյուրանոցում Հնկերության հյուրերի իջևանումը կազմակերպելու համար և կապահովի Հնկերության հյուրերի անվճար տրանսպորտային փոխադրումը Հյուրանոցից դեպի նոր</p>

	<p>հյուրանոց: Հյուրանոցի պատասխանատվությունը սահմանափակվում է վերոգրյալով, և Հյուրանոցը պատասխանատվություն չի կրում պատճառված այլ վնասների համար:</p>
<p>4.1.2 CANCELLATION BY COMPANY</p> <p>If Company cancels this Agreement or reduces the number of rooms requested, Company agrees that Hotel will suffer damages. Such damages will be a result of Hotel's inability to offer Company's unused space or services to other groups and/or the cost to Hotel of trying to re-sell the unused space/services. Therefore, it is agreed that the following fees will be due to Hotel in the event of cancellation or attrition.</p>	<p>ՉԵՂԱՐԿՈՒՄԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ</p> <p>Ընկերությունը համաձայնում է, որ Ընկերության կողմից սույն Պայմանագիրը լուծելու կամ պահանջվող սենյակների թիվը կրճատելու դեպքում Հյուրանոցը կկրի վնասներ: Այդ վնասները կրխեն Ընկերության կողմից չօգտագործված սենյակները և/կամ ծառայություններն այլ անձանց առաջարկելու անհնարինությունից կամ դրանք այլ անձանց վաճառելու նպատակով կատարված ծախսերից: Հետևաբար, կողմերը համաձայնում են, որ Ընկերության կողմից ամրագրումներն չեղարկելու կամ կրճատելու դեպքում Ընկերությունը Հյուրանոցին կվճարի հետևյալ վճարները.</p>
<p>CANCELLATION FEES:</p> <p>For cancellation of any one room booking, Company agrees to pay Hotel at the time of cancellation a fee, as follows:</p>	<p>ՉԵՂԱՐԿՄԱՆ ՎՃԱՐ.</p> <p>Յուրաքանչյուր սենյակի ամրագրման չեղարկման դեպքում Ընկերությունից չեղարկման ժամանակ կգանձվի վճար հետևյալ կերպ.</p>
<p>Later than 02.12.2022 – An amount equal to 100% of the revenue lost due to cancellation</p>	<p>02.12.2022 -ից ուշ չեղարկման դեպքում - Չեղարկման հետևանքով չստացված եկամտի 100%</p>
<p>Reduction of one room can be done free of charge up to 24 hours before arrival.</p>	<p>Մեկ սենյակ հնարավոր է անվճար չեղարկել ժամանումից 24 ժամ առաջ:</p>
<p>Any no-show will be treated as a cancellation.</p>	<p>Չժամանելը և սենյակը չպահանջելը կհամարվի ամրագրման չեղարկում:</p>
<p>4.2 EARLY CHECK-IN/LATE CHECK-OUT:</p> <p>One night's rate will be charged to Company for a late check-out/early check-in.</p>	<p>ՇՈՒՑ ՀԱՇՎԱՌՎԵԼԸ/ՈՒՐ ԿՍԵՎԱՌՈՒՄԻՑ ԴՈՒՐՄ ԳԱԼԸ.</p> <p>Շուտ հաշվառվելու, ինչպես նաև հաշվառումից ուշ դուրս գալու դեպքում Ընկերությունից գանձվում է վճար մեկ գիշերվա սակագնի չափով:</p>
<p>Notwithstanding this Section 4, if Company takes any action resulting in the cancellation or reduction of the rooms to be provided under this Agreement, Hotel will in good faith, but will not be obliged to, consider waiving all or a portion of the fees to which Hotel might otherwise be entitled under this Agreement, provided that Company has provided Hotel with substantial evidence that it has booked or will book other business with Hotel that, in Hotel's discretion, mitigates the damages/losses Hotel would incur through the cancellation/attrition of the rooms that would otherwise be provided under this Agreement.</p>	<p>Չնայած վերոգրյալին, եթե Ընկերությունը ձեռնարկի որևիցե գործողություն, որը կարող է հանգեցնել սույն Պայմանագրում նշված ամրագրումների չեղարկմանը կամ կրճատմանը, ապա Հյուրանոցը բարեխղճորեն կփորձի, սակայն պարտավոր չէ, հրաժարվել այն վճարներից, որոնք սույն Պայմանագրի համաձայն երթակա են վճարման Հյուրանոցին նման դեպքերում, կամ դրանց մի մասից, պայմանով, որ Ընկերությունը Հյուրանոցին ներկայացնի բավարար ապացույցներ, որ Ընկերությունը Հյուրանոցում այլ հյուրերի համար ամրագրել է կամ ապագայում ամրագրելու է սենյակներ/ծառայություններ, ինչք Հյուրանոցի կարծիքով կարող է մեղմել սույն Պայմանագրով նախատեսված ամրագրումների չեղարկման կամ կրճատման հետևանքով Հյուրանոցին պատճառված վնասները/կորուստները:</p>
<p>SECTION FIVE</p>	<p>ՀՈՂՎԱՑ ՀԻՆԳԵՐՈՐԸ</p>
<p>MISCELLANEOUS</p>	<p>ԱՅԼ ԴՐՈՒՑԹՆԵՐ</p>
<p>5.1 SIGNS AND DISPLAYS/USE OF HOTEL NAME: Company shall not use the name/logo of Hotel in any promotional brochures or ads without prior approval of Hotel.</p>	<p>ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ԱՆՎԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ.</p> <p>Ընկերությունը չպետք է պրոմո բրոշյուրներում կամ գովազդներում առանց Հյուրանոցի նախնական համաձայնության օգտագործի Հյուրանոցի անվանումը և/կամ լոգոն:</p>
<p>5.2 HOTEL CONTACT/NOTICES: All notices and other communications hereunder shall be in writing and shall be deemed delivered if hand delivered or sent by registered mail or e-mail to Company contact on the first page of this Agreement, or, if to Hotel, to the attention of: Knarik Stepanova at: 4/2 Grigor Lusavorich Street, Yerevan, Armenia, if sent by registered mail, or at: Knarik.Stepanova@hilton.com , if sent by e-mail. Company and Hotel may change their designated contacts at any time upon prior</p>	<p>ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ԿՈՆՏԱԿՏՆԵՐ և ՏԳՅԱԼՆԵՐ/ՇՄԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ. Սույն Պայմանագրի շրջանակներում բոլոր ծանուցումներն ու այլ հաղորդումները պետք է լինեն գրավոր և համարվեն առաքված, Ընկերության դեպքում, եթե առաքվել են առձեռն կամ պատվիրված նամակով կամ էլ. փոստով առաջին էջում նշված Ընկերության կոնտակտային անձին, իսկ Հյուրանոցի</p>

<p>written notice. Hotel will not be bound by any notice, unless delivered to Hotel in the manner specified herein. Notices shall be deemed delivered on the third day after posting, if delivered by registered mail (postage prepaid), or when sent, if delivered by e-mail.</p>	<p>դեպքում, եթե առաքվել են Քնարիկ Ստեփանովային ՀՀ, ք. Սրնան, Գրիգոր Լուսավորիչ 4/2 հասցեով կամ Knarik.Stepanova@hilton.com էլ.փոստի հասցեով: Հյուրանոցը և Հնկերությունը կարող են ցանակացած ժամանակ նախնական գրավոր ծանուցման միջոցով փոխել իրենց կոնտակտային անձանց: Հյուրանոցը որևէ ծանուցմամբ պարտավորված չի լինի, եթե այդ ծանուցումը Հյուրանոցին առաքված չլինի վերոգրյալ կարգով: Ծանուցումները համարվում են առաքված փոստային ծառայությանը հանձնելուց հետո երրորդ օրը, եթե առաքված են պատվիրված նամակով, փոստային ծառայությունների համար նախապես վճարմամբ, կամ ուղարկելու պահից, եթե առաքված են էլ.փոստով:</p>
<p style="text-align: center;">SECTION SIX</p> <p style="text-align: center;">GENERAL PROVISIONS</p>	<p style="text-align: center;">ՀՈՂՎԱՍՏ ՎԵՑԵՐՈՂ</p> <p style="text-align: center;">ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԴՐՈՒՑՑԵՐԸ</p>
<p>6.1 DAMAGE CLAUSE: In the unlikely event that damage to any Hotel property occurs as a result of any act or omission, whether willful or negligent, of Company guests, or from a property brought in by Company guests, Company agrees to assume all related liability and expense. Company shall, to the extent allowed by law, indemnify, release, defend and hold harmless Hotel and its officers, directors, partners, affiliates, members and employees from and against all demands, claims, damages, losses and liabilities, including attorney's fees (on a full indemnity basis), arising out of or caused by Company guests' willful, negligent acts or omissions. Company further agrees to reimburse the cost to Hotel of replacing items removed from Hotel's premises by Company's guests without Hotel's consent. Replacement cost includes carriage costs.</p>	<p>ՎՆԱՍՆԵՐ. Հնկերությունը կստանձնի պատասխանատվություն և կհոգա բոլոր ծախսերը, եթե Հնկերության հյուրերի դիտավոր կամ անզգույշ գործողության, անգործության հետևանքով կամ նրանց կողմից բերված գույքի միջոցով վնաս պատճառվի Հյուրանոցի գույքին: Օրենքով թույլտարելի սահմաններում Հնկերությունը պետք է փոխհատուցի, ազատի, պաշտպանի և զերծ պահի Հյուրանոցին, վերջինիս աշխատողներին, տնօրեններին, գործընկերներին, մասնակիցներին, աշխատակիցներին և Հյուրանոցի հետ փոխկապակցված անձանց բոլոր տեսակ պահանջներից, հայցերից, վնասներից, կորուստներից և պատասխանատվության բոլոր այլ տեսակներից, ներառյալ դատական և փաստաբանների ծախսերից (հաշվարկված ամբողջությամբ փոխհատուցելու սկզբունքով), որոնք բխում են կամ հետևանք են Հնկերության հյուրերի դիտավոր կամ անզգույշ գործողության կամ անգործության: Հնկերությունը համաձայնում է նաև Հյուանոցին հատուցել Հնկերության հյուրերի կողմից առանց Հյուրանոցի համաձայնության Հյուրանոցի տարածքից դուրս բերված իրերի փոխարինման արժեքը, այդ արժեքի մեջ ներառվում են նաև փոխադրման ծախսերը:</p>
<p>6.2 FORCE MAJEURE: The performance under this Agreement is subject to any circumstances making it illegal or impossible for Hotel to provide Hotel facilities or for Company to hold its event, including, but not limited to, natural disasters, war, government regulations. This Agreement may be terminated for any one of the above reasons by written notice to Company by Hotel or to Hotel by Company.</p>	<p>ՖՈՐՍ ՄԱՅԺՈՐ. Սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը կարող է դադարեցվել այնպիսի հանգամանքների ուժով, որոնք անհնարին կամ ապօրինի են դարձնում Հյուրանոցի կողմից սենյակներ տրամադրելը կամ Հնկերության կողմից միջոցառումն անցկացնելը, ներառյալ տարերային աղետների, պատերազմների, կառավարման մարմինների որոշումների հետևանքով: Հյուրանոցը և Հնկերությունը կարող են գրավոր ծանուցմամբ լուծել սույն Պայմանագիրը նման հանգամանքներից յուրաքանչյուրի առկայության դեպքում:</p>
<p>6.3 DISPUTE RESOLUTION: Disputes arising out of or in connection with this Agreement, including any question regarding its existence, validity or termination, shall be referred to the Financial Arbitration Court of UBA (Union of Banks of Armenia). Disputes shall be resolved under the Rules of the Financial Arbitration Court of UBA. There shall be one arbitrator. The seat of Arbitration shall be Yerevan. The language of arbitral proceedings shall be Armenian.</p>	<p>ՎԵՃԵՐԻ ԼՈՒՇՄԱՆ ԳԱՐԳԸ. Սույն Պայմանագրի կապակցությամբ, այդ թվում նաև սույն Պայմանագրի վավեր լինելու, լուծման կապակցությամբ, ծագած վեճերի լուծումը հանձնվում է ՀԲՄ (Հայաստանի Բանկերի Միության) ֆինանսական արբիտրաժային դատարանին: Վեճը լուծվում է ՀԲՄ (Հայաստանի Բանկերի Միության) ֆինանսական արբիտրաժային դատարանի կանոնակարգի համաձայն մեկ արբիտրի կազմով, արբիտրաժային վարույթի լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ քաղաք Երևանը:</p>
<p>6.4 ENTIRE AGREEMENT: This Agreement and any Exhibits hereto constitute the entire agreement between the parties and supersede any previous communications, representations or agreements (whether written or oral) in respect of the subject matter</p>	<p>ՍԱՐԴՈՋ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ. Կողմերի միջև սույն Պայմանագրի խնդրո առարկայի վերաբերյալ կայացված բոլոր համաձայնություններն ու</p>

<p>hereof. Exhibits are an integral part hereof. Any changes to this Agreement must be made in writing and signed by the authorized representative of each party.</p>	<p>պայմանավորվածություններն ամբողջությամբ ամրագրված են սույն Պայմանագրում և դրա հավելվածներում: Սույն Պայմանագիրը և դրա հավելվածները գերակայում են նախկինում սույն Պայմանագրի խնդրո առարկայի վերաբերյալ փոխանակված գրությունների, գրավոր կամ բանավոր տրամադրված տեղեկությունների, հավաստիացումների, համաձայնությունների եկատմամբ: Հավելվածները հանդիսանում են սույն պայմանագրի անբաժան մասը: Սույն Պայմանագրի բոլոր փոփոխությունները կատարվում են գրավոր և ստորագրվում կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:</p>
<p>6.5 AUTHORITY: The persons signing this Agreement for Hotel and Company each warrant that they are authorized to bind Hotel and Company, respectively.</p>	<p>ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Ընկերության և Հյուրանոցի անունից սույն Պայմանագիրը ստորագրող անձիք հայտնում և երաշխավորում են, որ իրենք իրավասու են պարտավորություններ ստեղծել համապատասխանաբար Ընկերության և Հյուրանոցի համար:</p>
<p>6.6 NO ASSIGNMENT: Neither party may assign or transfer this Agreement or any part thereof without the prior written consent of the other party.</p>	<p>ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԻՋՈՒՄ ԵՎ ՓՈՒՄՆՑՈՒՄ. Կողմերից ոչ ոք իրավունք չունի առանց մյուս կողմի նախնական գրավոր համաձայնության զիջել սույն Պայմանագրից բխող իր իրավունքները կամ փոխանցել դրանից բխող իր պարտավորությունները:</p>
<p>6.7 RIGHT OF HOTEL TO TERMINATE: If any material information is falsely provided by Company to Hotel regarding Company's activities, purpose, or any other material information about Company, Hotel may terminate this Agreement in whole or part and Company will be liable to pay a cancellation fee as provided in section 4 hereof as if this Agreement were terminated/reservations were cancelled by Company.</p>	<p>ՊԱՅՄԱՆԱԳՐԸ ԼՈՒՄԵԼՈՒ ՅՑՈՒՐԱՆՑԻ ԻՐԱՎՈՒՆՔ. Ընկերության գործունեության, նպատակների կամ Ընկերությանը վերաբերող այլ էական հարցերի առնչությամբ Ընկերության կողմից Հյուրանոցին կեղծ տեղեկություններ տրամադրելու դեպքում Հյուրանոցն իրավունք կունենա լուծել սույն Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասամբ, իսկ Ընկերությունը պարտավոր կլինի նման պարագայում վճարել ամրագրումների չեղարկման հետևանքով սույն Պայմանագրի 4 հոդվածի համաձայն վճարման ենթակա բոլոր գումարները, այնպես կարծես ամրագրումները չեղարկված լինեն կամ պայմանագիրը լուծված լինի Ընկերության կողմից:</p>
<p>6.8 UNDERCHARGING AND OVERCHARGING: If Hotel has overcharged Company as a result of an error, defect or default, then Hotel will use best endeavors to inform Company within 10 business days after discovering the overcharging and give a correcting refund (without interest).</p>	<p>ԱՎԵԼ ԿԱՍ ՊԱԿԱՍ ՀԱՇՎԵԳՐՈՒՄՆԵՐ. Միայնի կամ թերության հետևանքով Ընկերությունից ավել գումար գանձելու դեպքում Հյուրանոցը կգործադրի բոլոր հնարավոր ջանքերն Ընկերությանն այդ մասին բացահայտելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելու և ավել գանձված գումարը վերջինիս վերադարձնելու համար: Ավել գումարը վերադարձվում է առանց տոկոսների:</p>
<p>If Hotel has undercharged Company as a result of an error, defect or default, then: (1) a correcting payment will be due from Company, provided that the error, defect or default was discovered within 60 days after the date at which the invoice was issued; and further provided that (2) Hotel will not charge interest on the correcting payment.</p>	<p>Միայնի կամ թերության հետևանքով Ընկերությունից պակաս գումար գանձելու դեպքում (1) Ընկերությունը պարտավոր կլինի վճարել չվճարված գումարը, պայմանով, եթե միայն կամ թերությունը հայտնաբերվել է հաշիվ-վավերագիր ներկայացնելուց հետո 60 օրվա ընթացքում, և (2) Հյուրանոցը չվճարված գումարի համար Ընկերությունից տոկոս չի գանձի:</p>
<p>6.9 LANGUAGE: This Agreement is drafted in the Armenian and English languages in two original copies. Each party holds a copy. In the event of any inconsistency, the Armenian-language version shall prevail.</p>	<p>ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼԵԶՈՒՆ. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով, երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Անգլերեն և հայերեն տարբերակների միջև անհամապատասխանություններ լինելու դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:</p>
<p>6.10 SEVERABILITY: Any provision of this Agreement that is deemed invalid or unenforceable shall be ineffective to the extent of such invalidity or unenforceability without invalidating or rendering the remainder of this Agreement unenforceable. Invalid, unenforceable provisions</p>	<p>ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Սույն Պայմանագրի մի մասին անվավերությունը չի հանգեցնում Պայմանագրի մյուս դրույթների անվավերությանը: Անվավեր մասերը պետք է առանձնացվեն</p>

shall be severed from the rest of this Agreement and be deemed replaced with provisions that come nearest to expressing the intention of the parties. The parties shall execute such other and further documents as may be necessary to carry out the intention as well as to comply with the provisions of this Agreement.	Պայմանագրի մնացած դրույթներից և համարվեն փոխարինված այնպիսի դրույթներով, որոնք հնարավորինս ճշգրտորեն են արտահայտում կողմերի մտադրությունները: Կողմերը կստորագրեն այնպիսի լրացուցիչ փաստաթղթեր, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Պայմանագրի նպատակներն իրագործելու և դրանով նախատեսված պահանջները կատարելու համար:
6.11 GOVERNING LAW	ԳՐԸԱՌՆԵՐ ՕՐԵՆՔԸ
This Agreement (including the arbitration agreement) shall be governed by and construed in accordance with the laws of Armenia.	Սույն Պայմանագիրը (ներառյալ արբիտրաժային վերապահումը) ղեկավարվում և մեկնաբանվում է ՀՀ օրենսդրության համաձայն:
6.12 CONTRACT DRAFTING	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
This Agreement was drafted and negotiated by both parties.	Սույն Պայմանագիրը կազմվել է, դրա դրույթները քննարկվել են երկու կողմերի կողմից:
To serve as our mutual agreement this document must be signed and returned by _____. If the signed Agreement is not received by the date requested, all rooms and space may be released for sale. Once signed by Company, it shall, however, take effect retrospectively from the date first above written.	Կողմերի միջև կայացված փոխադարձ համաձայնության վերաձվելու համար սույն Պայմանագիրը պետք է ստորագրվի և վերադարձվի նախքան ____-ը: Եթե Հյուրանոցը նշված օրվա դրությամբ ստացած չլինի սույն Պայմանագրի ստորագրված օրինակը, ապա Հյուրանոցն իրավունք կունենա վաճառքի հանել բոլոր սենյակները: Ընկերության կողմից ստորագրվելուց հետո, Պայմանագրին կտրվի հետադարձ ուժ և այն հետին թվով կսկսի գործել սույն Պայմանագրի առաջին էջում նշված օրվանից:

HOTEL ՀՅՈՒՐԱՆՈՑ	COMPANY ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
14 Abovyan Street, Yerevan, Armenia Tax code: 02617333	0011, G. Hovsepyan 26, Yerevan, Armenia, Tax code: 01 540062
By: Luciano Casagrande Position: Authorized signatory, acting pursuant to a power of attorney dated February 26, 2022	By: Hovhannes Movsisyan Position: Executive Director
ՀՀ, Երևան, Արվյան 14 փո. ՀՎՀՀ: 02617333	ՀՀ, 0011, Երևան, Գ. Հովսեփյան 26 ՀՎՀՀ: 01540062
Լուչիանո Կասագրանդե Լիազորված անձ, գործում է 2022թ.ի փետրվարի 26-ին տրված լիազորագրի հիման վրա:	Հովհաննես Մովսիսյան Գործադիր տնօրեն

PLACE OF EXECUTION: YEREVAN

ԿԸՔՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ԵՐԵՎԱՆ



Addendum 1
Group Sales Agreement made by and between
VELOFIRMA LLC d.b.a DOUBLETREE BY HILTON HOTEL YEREVAN CITY CENTRE

And
PUBLIC TELEVISION COMPANY OF ARMENIA CJSC

Հավելված № 1

Վերաբերյալ ՍՊԸ,

Դարձրի բայ Հիլթոն Հոթել Երևան Սիթի Սենթրի և Հայաստանի հանրային հեռուստաընկերություն
ՓԲԸ-ի միջև կնքված խմբային վաճառքի պայմանագրի

Accommodation						
N	Dates	Description	Rate (AMD)	Qquantity	Room nights	Total amount
1	04.12 - 12.12.2022	Double room	49800	6	8	2390400
2	04.12 - 12.12.2022	Single room	38400	12	8	3686400
3	07.12 - 12.12.2022	Single room	38400	2	5	384000
4	10.12 - 12.12.2022	Single room	38400	1	2	76800
Total amount						6537600

<p>HOTEL/ՀՅՈՒՐԱՆՈՑ Velofirma LLC/Doubletree by Hilton Hotel Yerevan City Centre Վերաբերյալ ՍՊԸ/Դարձրի բայ Հիլթոն Հոթել Երևան Սիթի Սենթր Address: 14 Abovyan str. . Yerevan, Armenia Հասցեն: Արոյան 14, Երևան, Հայաստան Phone: +374 43 77 82 83 E-mail: Knarik.Stepanova@Hilton.com Banking Details / Բանկային տվյալներ "Ameriabank" CJSC/«Ամերիաբանկ» ՓԲԸ Tax code/ՀՎՀՀ: 02617333 Account number/ՀՀ: 1570015744800100</p> <p style="text-align: right;"> </p> <p>L. Casagrande Լ. Կասագրանդե Authorized person Լիազորված անձ</p>	<p>Company/Կազմակերպություն Public Television Company of Armenia CJSC «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ Address: 0011, G. Hovsepyan 26, Yerevan, Armenia, Հասցեն: ՀՀ, 0011, Երևան, Գ. Հովսեփյան 26 Banking Details / Բանկային տվյալներ «Ինեկոբանկ» ՓԲԸ, Inecobank CJSC Tax code/ՀՎՀՀ: 01540062 Account number/ՀՀ: 2050022082671001</p> <p style="text-align: center;"></p> <p>By: Hovhannes Moushyan Հովհաննես Մուսիսյան Position: Executive Director Գործադիր տնօրեն</p> <p style="text-align: center;"></p>
---	---